ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.19-րդ կետերի պահանջներով

որոշում եմ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության շրջանում ռազմամարզական խաղերի կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության շրջանում ռազմամարզական խաղերի ներդպրոցական, տարածքային և մարզային փուլերի կազմակերպման և անցկացման ժամանակացույցը՝ համաձայն N 2 հավելվածի .

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության շրջանում ռազմամարզական խաղերի կազմակերպման և անցկացման տարածքային փուլի մրցավարական հանձնաժողովի կազմը՝ համաձայն N3 հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության շրջանում ռազմամարզական խաղերի կազմակերպման և անցկացման մարզային փուլի մրցավարական հանձնաժողովի կազմը՝ համաձայն N4 հավելված :

2. Կազմկոմիտեին / նախագահ՝ Գ. Բադալյան /՝

1) ապահովել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության զանգվածային մասնակցությունը ռազմամարզական խաղերի տարածքային և մարզային փուլերի մրցումներին.

2) մարզային փուլում կազմակերպել մրցումների բացման և փակման հանդիսավոր արարողություններ.

3) մրցումների 3-րդ փուլի ավարտից հետո ներկայացնել գրավոր հաշվետվություն:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա.Ղուկասյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ